"Յունիբանկ"-ի 2003թ. տարեկան հաշվետվություն

Անկախ աուդիտորի հաշվետվությունը

Մեր կողմից իրականացվել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար, կցված 6-ից 37 էջերում, պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: 2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է մեր կողմից և նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտվել է առանց վերապահումների դրական կարծիք 24.01.2003թ. մեր հաշվետվությամբ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Համաձայն Հնարավոր կորուստների պահուստներ ծանոթագրության՝ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով 31.12.2003թ. դրությամբ Բանկը ձևավորել է պահուստ 272,352 հազ. դրամ ընդհանուր գումարով, ինչը մեր գնահատումներով բավարար չէ վարկային ռիսկն ամբողջովին փոխհատուցելու համար: Մեր հաշվարկներով 31.12.2003թ. դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով անհրաժեշտ էր ձևավորել պահուստ ևս 113,000 հազ. դրամ գումարով: Արդյունքում հաշվետու տարվա արդյունքում շահույթի փոխարեն Բանկը կունենա զուտ վնաս 75,079 հազ. դրամ գումարով, իսկ սեփական կապիտալի մեծությունը կկազմի 2,862,481 հազ. դրամ:

Մեր կարծիքով, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ պարագրաֆում նշված հարցերի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտներին համապատասխան:

Երևան, 23 հունվարի, 2004թ.

Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն հազ. ՀՀ դրամ

	Ծանոթ.	2003թ. (ստուգված)	2002թ. (ստուգված)
Տոկոսային եկամուտներ	4	915,683	445,456
Տոկոսային ծախսեր	4	(415,726)	(228,119)
Զուտ տոկոսային եկամուտներ		499,957	217,337
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	247,106	105,711
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(27,419)	(22,167)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		219,687	83,544
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	6	52,920	153,874
Զուտ եկամուտ ներդրումային արժեթղթերից		63	-
Այլ գործառնական եկամուտ	7	11,460	3,025
Գործառնական եկամուտ		**784,087**	**457,780**
Մասհանումներ հնարավոր կորուստների պահուստներին	8	(386,285)	(61,333)
Այլ գործառնական ծախսեր	9	(339,671)	(253,933)
Շահույթ մինչև հարկումը		58,131	142,514
Շահութահարկի գծով ծախս	22	(20,210)	(11,075)
Տարվա զուտ շահույթ		**37,921**	**131,439**

10-ից 37 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հաշվապահական հաշվեկշիռ

առ 2003թ. դեկտեմբերի 31-ը հազ. ՀՀ դրամ

	Ծանոթ.	2003թ. (ստուգված)	2002թ. (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	10	1,599,396	532,969
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11	4,857,095	2,208,138
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	12	6,132,675	3,666,891
Ներդրումներ արժեթղթերում	13	542,831	158,958

Ներդրում ասոցիացված կազմակերպությունում	14	375,000	408,638
Հիմնական միջոցներ	15	63,768	33,653
Ոչ նյութական ակտիվներ	16	52,510	10,159
Այլ ակտիվներ	17	102,117	139,592
Ընդամենը ակտիվներ		**13,725,392**	**7,158,998**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	683,286	368,170
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	19	9,874,230	3,788,066
Վճարվելիք տոկոսներ և այլ պարտավորություններ	20	192,395	65,202
Ընդամենը պարտավորություններ		10,749,911	4,221,438
Բաժնետիրական կապիտալ	21	2,799,850	2,799,850
Գլխավոր պահուստներ		6,885	-
Կուտակված շահույթ /(վնաս)		168,746	137,710
Ընդամենը կապիտալ		2,975,481	2,937,560
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**13,725,392**	**7,158,998**

10-ից 37 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը: Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Բանկի ղեկավարության կողմից 2004թ. հունվարի 20-ին և ստորագրվել են Բանկի Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Վարդան Աթայան	**Գոհար Գրիգորյան**
Բանկի գործադիր տնօրեն	***Գլխավոր հաշվապահ***

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար հազ. ՀՀ դրամ

	Կանոնա-դրական կապիտալ	**Գլխավոր պահուստ**	**Կուտակված շահույթ**	**Ընդամենը**
Մնաց. առ 31 դեկ. 2001թ. (ստուգված)	**2,799,850**	**-**	**6,271**	**2,806,121**
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	-	131,439	131,439
Մնաց. առ 31 դեկ. 2002թ. (ստուգված)	**2,799,850**	**-**	**137,710**	**2,937,560**
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	-	37,921	37,921
Մասհանում պահուստին	-	6,885	(6,885)	-
Մնաց. առ 31 դեկ. 2003թ. (ստուգված)	**2,799,850**	**6,885**	**168,746**	**2,975,481**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար հազ. ՀՀ դրամ

	Ծանոթ.	**2003թ. (ստուգված)**	**2002թ. (ստուգված)**
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Շահույթ մինչև հարկումը		58,131	142,514
Ճշգրտումներ՝			
- Մասհանումներ հնարավոր կորուստների պահուստներին	8	348,154	60,919
- Մաշվածություն և ամորտիզացիա		26,731	15,914
- Տոկոսային եկամուտ և այլ ստացվելիք գումարներ		57,113	(102,912)
- Տոկոսային ծախս և այլ վճարվելիք գումարներ		71,273	40,742
Վճարված շահութահարկ		(21,775)	(174)
Գործառնական շահույթ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		539,627	157,003
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում			
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում		(5,010)	-
Վարկեր և ավանդներ բանկերում		60,000	(60,000)
Հաճախորդներին տրված վարկեր		(2,743,981)	(3,627,026)
Այլ ակտիվներ		(19,444)	(14,512)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում			
Բանկերից ավանդներ		315,116	368,170
Հաճախորդների ավանդներ		6,086,164	2,918,839
Այլ պարտավորություններ		5,751	6,076
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր		**4,238,223**	**(251,450)**

Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք		(341,895)	1,909,683
Հիմնական միջոցների առք		(53,559)	(30,915)
Հիմնական միջոցների վաճառք	15	-	515
Ոչ նյութական ակտիվների առք		(45,638)	(11,720)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր		**(441,092)**	**1,867,563**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**3,797,131**	**1,616,113**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		2,703,411	1,087,298
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	10	**6,500,542**	**2,703,411**